ԿՐՕՆԱԳԻՏԱԿԱՆ

Տ. ՅԱԿՈԲ ԱՐՔ. ԳԼՆՃԵԱՆ

ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ԿԱՏԱՐԱԾԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐ

Քրիստոնէական կատարածաբանութիւնը նկատի ունի «Վերջին ժամանակներում» տեղի ունենալիք արտասովոր ու ահեղ ացունց դէպքերը, աշխարհի վախճանը, Յիսուս Քրիստոսի երկրորդ գալուստն ու Վերջին Դատաստանը, որոնց մասին բազմաթիւ արտայայտութիւններ կան Նոր Կտակարանում՝ երբեմն պարզ եւ երբեմն էլ դժուար հասկանալի:

Յիսուս իր ժամանակակիցներին եւ հետագայ սերունդներին յայտնեց, թէ բազում նեղութիւններ պիտի կրեն, յատկապէս երբ մօտենայ իր երկրորդ գալուստը, բայց երբեք չյայտնեց իր գալստեան ճշգրիտ թուականը՝ ասելով. «Այդ օրուայ եւ ժամի մասին ոչ ոք չգիտէ, ո՛չ հրեշտակները երկնքում եւ ո՛չ էլ՝ Որդին, այլ միայն Հայրը» (Մրկս. ԺԳ 32), այսինքն՝ նոյնպէս եւ իր հաւատացեալները չպէտք է իմանան դրանց մասին, որպէսզի նրանք շարունակեն հսկել եւ աղօթել, միշտ մտածելով, թէ այդ գալուստը կարող է տեղի ունենալ իրենց կենդանութեան օրօք. «Արթուն կացէ՛ք, որովհետեւ չգիտէք, թէ ո՛ր ժամին կը գայ ձեր Տէրը» (Մտթ. ԻԴ 42, Մրկս. ԺԳ 33):

Եկեղեցին սկզբից եւեթ, հիմնուելով Նորկտակարանեան վկայութիւնների վրայ, դաւանել է եւ շարունակում է դաւանել, թէ Յիսուս Քրիստոս «գալոց է նովին մարմնով եւ փառօք Հօր»: Համբարձման ժամանակ, մինչ աշակերտները ակնապիշ նայում էին երկինք գնացող եւ իրենց աչքերից անհետացող Յիսուսի ետեւից, ահա երեւում են երկու հրեշտակներ եւ ասում. «Այս Յիսուսը, որ ձեր միջից երկինք վերացաւ, պիտի գայ նոյն ձեւով, ինչպէս տեսաք նրան երկինք գնալիս» (Գործք Ա 11):

Մինչ այդ, սակայն, կանխատեսուած արհաւիրքները հետապնդում են մէկ նպատակ. նախազգուշացնել Քրիստոսի հաւատացեալներին այդ բոլոր պատահելիքների նկատմամբ եւ քաջալերել նրանց, որ չյուսահատուեն, քանզի Տէրը պիտի չլքի նրանց, յատկապէս այն պահին, երբ թւում է ամէն ինչ կործանուած եւ անյուսալի, նա պիտի յայտնուի իր փառքով եւ զօրութեամբ, պիտի ազատի նրանց: Հետեւաբար այդ վերջնական յայտնութիւնը պիտի լինի Եկեղեցու վերջնական փրկութիւնը: Այս մասին շատ յստակ կերպով է գրուած Ղուկասի Աւետարանում. «Երբ այս բոլորը սկսի կատարուել, վե՛ր կացէք եւ ձեր գլուխները բարձրացրէք, որովհետեւ մօտ է ձեր փրկութիւնը» (Ղուկս. ԻԱ 28):

ԳԱԼՈ՞ՒՍՏ, ԹԷ՞ ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ

Նոր Կտակարանում Տիրոջ երկրորդ գալուստը նշում է յունարէն **պարուսիա** (***parousia***) բառով, որ նշանակում է *գալուստ, ներկայութիւն, երեւում, յայտնութիւն*: Եկեղեցական հայրերն էլ այդ բառին տուել են աստուածաբանական հանգամանք, որով նկատի է առնում Տիրոջ վերադարձը երկիր[1]:

Իրականում, սակայն, **պարուսիան** Նոր Կտակարանում իր *գալուստ* իմաստից աւելի *յայտնութիւն* կամ *երեւում* իմաստով է հանդէս գալիս, որովհետեւ Յիսուս ամբողջովին չի հեռացել այս աշխարհից ու մարդկանցից, բացակայ չէ ժամանակից ու պատմութիւնից, որ մի օր էլ վերադառնայ այնտեղ: Նա ինքն էլ վստահեցրեց իր հաւատացեալներին, որ իրենց հետ պիտի լինի մինչեւ աշխարհի վախճանը (Մտթ. ԻԸ 20):

Երկրորդ գալուստ ասելով՝ հասկացւում է Տիրոջ վերստին եւ վերջնական յայտնութիւնը աշխարհին, երեւալը իր «երկնային զօրութեամբ եւ փառօք բազմօք»: Այս է պատճառը, որ Պօղոս առաքեալը շատ անգամ **պարուսիա**-ի փոխարէն ունի **էպիֆանիա** (յայտնութիւն) կամ գործածում է երկուսն էլ միասին՝ ըստ հետեւեալի. «Եւ ապա պիտի յայտնուի անօրէնը, որին Տէր Յիսուս պիտի կործանի իր բերանի շնչով եւ պիտի ոչնչացնի իր գալստեան (*պարուսիա*) յայտնութեամբ (*էպիֆանիա*)» (Բ Թես. Բ 8):

Հետեւաբար, կարելի է իրաւամբ ասել, թէ **պարուսիան** Աստուածայայտնութիւն է, երկնային արքայութեան յայտնութիւնը, որի կենտրոնում է Յիսուս Քրիստոս իր աստուածային փառքի ու վեհութեան ճառագայթումով՝ շրջապատուած հրեշտակների գունդերով:

ՍՈՒՐԲ ԳՐԱՅԻՆ ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ

Կատարածաբանական դէպքերի մասին Յիսուսի արտայայտութիւնները, ընդհանուր առմամբ, հիմնուած են Հինկտակարանեան պատկերների վրայ: Դրանք համեմատական կարգով ներկայացնում են հետեւեալ պատկերը.

«Զեզ նեղութեան պիտի մատնեն եւ պիտի սպանեն ձեզ. եւ իմ անուան պատճառով բոլոր ազգերի կողմից ատելի պիտի լինէք: Եւ այն ժամանակ շատերը պիտի գայթակղուեն եւ միմեանց պիտի մատնեն ու միմեանց պիտի ատեն: Եւ բազում սուտ մարգարէներ պիտի ելնեն ու շատերին պիտի մոլորեցնեն: Եւ անօրէնութեան շատանալուց՝ շատերի սէրը պիտի ցամաքի: Բայց ով մինչեւ վերջ համբերեց, նա պիտի փրկուի: Եւ արքայութեան այս Աւետարանը պիտի քարոզուի ամբողջ տիեզերքում՝ ի վկայութիւն բոլոր հեթանոսների. եւ ապա պիտի գայ վախճանը» (Մտթ. ԻԴ 9-14):

«Բայց այդ օրերին, այդ նեղութիւնից յետոյ, արեգակը պիտի խաւարի, եւ լուսինը իր լոյսը չպիտի տայ: Եւ աստղերը երկնքից վայր պիտի թափուեն, եւ երկնքում զօրութիւնները պիտի շարժուեն: Եւ այն ժամանակ պիտի տեսնեն մարդու Որդուն՝ եկած ամպերի վրայով՝ զօրութեամբ եւ բազում փառքով: Եւ այն ժամանակ պիտի ուղարկի իր հրեշտակներին ու պիտի հաւաքի իր ընտրեալներին չորս կողմերից, երկրի ծագերից մինչեւ երկնքի ծագերը» (Մրկս. ԺԳ 24-27):

1 Տե՛ս **K. Rahner/H. Vorgrimler**, Th. Woerterbuch, 1981, էջ 320-321:

«Արդարեւ երկնքի ասպղերը, Հայկի համասպեղութեան եւ երկնային բոլոր լուսատուների հետ միասին, լոյս չեն տալու, արեգակը իր ծագման պահին պիտի խաւարի, լուսինը նոյնպէս իր լոյսը չպիտի տայ» (Ես. ԺԳ 10):

«Երկնային բոլոր զօրութիւնները պիտի հալուեն, երկինքը մագաղաթի պէս պիտի գալարուի, բոլոր աստղերը ցած պիտի թափուեն ինչպէս որթատունկի տերեւ կամ ինչպէս թզենուց վայր ընկնող տերեւ» (Ես, ԼԴ 4):

«Տեսնում էի, որ, ահա, երկնքի ամպերի միջից գալիս է մէկը մարդու Որդու նման» (Դան. Է 13):

«Վեր կացէ՛ք, փախէ՛ք հիւսիսի երկրից,- ասում է Տէրը,- քանզի երկնքի չորս կողմերից պիտի հաւաքեմ ձեզ» (Զաք. Բ 6):

«Եթէ դու ցրիւ ես եկել երկրի մի ծայրից մինչեւ միւս ծայրը, այդտեղից էլ կը հաւաքի քեզ քո Տէր Աստուածը» (Բ Օրինաց Լ 4):

ԵՐԿՆԱԿԱՄԱՐԻ ԶՕՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՇԱՐԺ

Նեղութեան օրերից յետոյ տիեզերական զօրութիւնները պիտի սկսեն քայքայուել, ահաւոր տակնուվրայութիւն պիտի լինի, մի դրութիւն, որի մասին մտածելն անգամ ահաբեկել է Քրիստոսի ժամանակակիցներին, ինչպէս նաեւ մեզանից շատերին այսօր էլ է ահաբեկում: Եւ, իսկապէս, բացառապէս երկնքում եւ անջրպետում տեղի ունենալիք ցնցումները չափազանց սարսափազդու պիտի լինեն մարդկանց համար, այդ մասին Ղուկաս Աւետարանիչն էլ է վկայում. «Եւ նշաններ պիտի լինեն արեգակի, լուսնի եւ աստղերի վրայ: Եւ երկրի վրայ պիտի լինի հեթանոսների տագնապ՝ ծովի եւ խռովութեան նման ահեղ ձայնի պատճառով, աշխարհի վրայ գալիք պատահարների վախից եւ նախազգացումից մարդիկ պիտի մեռնեն, որովհետեւ երկնքի զօրութիւնները պիտի շարժուեն» (ԻԱ 25-26):

Տիեզերական ուժերի քայքայման վերոյիշեալ անդոհալից նկարագրութիւնները ինքնանպատակ չեն, դրանք առանձին վերցրած իրենցից ոչինչ չեն ներկայացնում, ոչ էլ ներկայացնում են աշխարհի վախճանը, այլ դրանք անմիջականօրէն կապ ունեն Յիսուսի կրկին յայտնուելուն հետ: Երկնակամարի զօրութիւնները պիտի երերան հէնց նրա համար, որ մարդու Որդին (Յիսուսը) թողնում է իր երկնային գահը, որը համաձայն Ս. Գրքի պատկերացման՝ գտնուում է երկնքի ամենաբարձր վայրում, եւ մեծ զօրութեամբ ու փառօք բազմօք անցնում է երկնային զօրութիւնների միջով, սարսելով դրանք: «Մեծ զօրութեամբ» ասելով՝ նկատի են առնում հրեշտակների գունդերը, որոնք ընկերանում են Փրկչին:

Հրեշտակային զօրութիւնների հետ Յիսուսի յաղթական մուտքը երկնային ոլորտներ լինելու է այնքան հզօր եւ հրաշալի, որ նոյնիսկ երկնակամարը, որտեղ, ըստ Ս. Գրքի, հաստատուած են լուսատուները, գալարուելու է: Լուսատուները ընկնելու են ցած, բայց չի ասում, թէ երկրի վրայ: Նրանց անկման վայրը յայտնի չէ:

Ստեփանոս Սիւնեցին (688-735) արեգակի եւ լուսնի խաւարման, ինչպէս նաեւ աստղերի վայր ընկնելու մասին ասում է հետեւեալը. «Ըստ առակի բացատրութեան՝ «արեգակը» պէտք է հասկանալ սատանան, որովհետեւ կերպարանաւորում է լոյսի

հրեշտակի կերպարանքով, նաեւ Նեռը, որ իրեն աստուած է անուանում: «Լուսինը» հերձուածողների եկեղեցիներն ու հրեաների ժողովարաններն են, որոնք կարող էին լուսաւորուել Աստծու ճշմարտութիւնից, սակայն նրանից չեն լուսաւորւում, այլ՝ սատանայից, որին աստուած են անուանում: Իսկ աստղերը նրանց վարդապետներն են, ինչպէս գրուած է Յուդա առաքեալի ընդհանրական թղթում. «Մոլոր աստղեր, որոնց համար է պահուած յաւիտենական խաւարի վիհը» (Յուդա Ա 13)»[2]:

Յիսուսի գալուստը նկատի է առնում իբրեւ «մարդու Որդու» գալուստ: Նա այդ կոչումով է յաճախ հանդէս գալիս Աւետարանում: Այս միեւնոյն արտայայտութիւնը գործածում է նաեւ Դանիէլ մարգարէն: Իր տեսիլքներից մէկում նա տեսնում է մէկին՝ նման «մարդու Որդու», որ գալիս էր ամպերի միջից, որին Աստուած տալիս է իշխանութիւն, փառք եւ արքայութիւն: Նրանով է Աստուած կատարում իր վերջին դատաստանը՝ աշխարհի անհաւատ թագաւորութիւնների դէմ, որոնք խորհրդանշական ձեւով ներկայացւում են գազանների կերպարանքով (Դան. Է 13-14):

Մեր Տէրն ինքը յօժարակամ կերպով իբրեւ սեփական տարբերանիշ գործածում է «մարդու Որդու» կոչումը, ընդ որում բացայայտելով աշխարհը դատելու իր իշխանութիւնը (Յովհ. Ե 27): Հրէական ատեանում, երբ քահանայապետը հարց էր տալիս նրան. «Դո՞ւ ես Քրիստոսը՝ օրհնեալ Աստուծոյ Որդին», նա հանդիսաւոր կերպով յայտարարում է. «Ես եմ, բայց պիտի տեսնէք մարդու Որդուն՝ Զօրութեան աջ կողմում նստած եւ երկնքի ամպերի վրայով եկած» (Մրկս. ԺԴ 61-62):

Ամպեր-ի յիշատակումը այլաբանօրէն խորհրդանշում է Աստծոյ միջամտութիւնը տիեզերքում՝ դատելու եւ պատժելու դիտաւորութեամբ, ինչպէս կարդում ենք Հին Կտակարանում. «Ահաւասիկ Տէրը բազմած թեթեւասահ ամպերի վրայ գալու է Եգիպտոս. եգիպտացիների կուռքերը նրա ահից պիտի դողան» (Ես. ԺԹ 1), «Նա, ով ամպերն իր համար կառք է դարձրել եւ շրջում է հողմերի թեւերին» (Սղմս. ՃԳ 3):

Ուրեմն, կատարածաբանական բոլոր տեսակի արտայայտութիւնները ոչ թէ աշխարհի վախճանի մասին մի ամբողջական նկարագրութիւն են տալիս, այլ բացայայտում են Յիսուսի գալուստը, որի դիմաց ամէն ինչ, յուդայական երկնակամարի զօրութիւններից սկսած, նսեմանում է, քանզի ի ծագել արդարութեան Արեգակի «կորընչին աստեղք»: Ինքնին, երբ Աստուած ինքն իրեն է յայտնում աշխարհին, մարդ արարածը զգում է լոյսի եւ զօրութեան ներկայութիւնը: Այս է պատճառը, որ արեւն ու լուսինը խաւարում են, որովհետեւ երկնքում իրենցից մի շատ աւելի հզօր ու փայլուն լոյս է յայտնւում, որն է հէնց ինքը՝ Աստծոյ Որդին:

Հետեւաբար, վերոյիշեալ արտայայտութիւնները չպէտք է ահաբեկեն արդար հաւատացեալներին, որովհետեւ «մարդու Որդին» գալու է ամպերի վրայով, մեծութեամբ եւ փառօք բազմօք, փրկելու իր Եկեղեցին Հակաքրիստոսի (Նեռի) սարսափելի բռնութիւնից, նրա մահաբեր եւ թունալից շնչից: Միայն չարի ուժերը եւ մահացու մեղքերի մէջ գտնուողներն են, որ ահաբեկուած պիտի ողբան ու կոծեն:

Որքա՜ն յուսապտու են Տիրոջ հետեւեալ խօսքերը իր կրկին աշխարհ գալու վերաբերեալ.

---

2 **Ստեփանոս Սիւնեցի**, Չորս Աւետարանների համառօտ մեկնութիւնը, Ս. Էջմիածին, 1997, էջ 106:

«Եւ եթէ գնամ եւ ձեզ համար էլ տեղ պատրաստեմ, դարձեալ կը գամ եւ ձեզ կը վերցնեմ ինձ մօտ» (Յովհ. ԺԴ 3), «Դուք այժմ տրտմութիւն ունիք, բայց ես դարձեալ ձեզ պիտի տեսնեմ ու ձեր սրտերը ուրախ պիտի լինեն» (Յովհ. ԺՁ 22)

ՍՈՒՐԲ ՎԱՅՐԻ ԱՒԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Մինչեւ Յիսուսի վերստին յայտնուելը պիտի կատարուեն այնպիսի դէպքեր, որոնք նախանշաններ պիտի հանդիսանան նրա երկրորդ գալստեան: Մատթէոսի Աւետարանում (ԻԴ 4-8, նաեւ՝ Ղուկ. ԻԱ 8-9) նկարագրուած մոլորեցուցիչների երեւումը, պատերազմների ձայներն ու լուրերը, սով, սրածութիւններ եւ տեղ-տեղ երկրաշարժներ դեռեւս «սկիզբն են երկանց»: Հիմնական նախանշանները պիտի լինեն հետեւեալները.

ա.- Հաւատքը պիտի նուազի (Ա Տիմ. Դ 1, Ղուկս. ԺԸ 8), Նեռի գործակալները կամ դեսպանները ահաւոր հալածանքի պիտի ենթարկեն Եկեղեցին՝ խափանելով պաշտամունքը:

բ.- Հակաքրիստոսը (Նեռը) պիտի յայտնուի (Դան. Է, Բ Թես. Բ, Ա Յովհ. Բ 18, Յայտ. ԺԳ):

գ.- Ծաղրածուներն ու սրբութիւններն արհամարհողները պիտի բազմանան, որոնք պիտի ասեն. «Ո՞ւր է նրա գալստեան խոստումը» (Բ Պետր. Գ 3-4):

դ.- Անօրէնութեան շատանալուց շատերի սէրը պիտի ցամաքի (Մտթ. ԻԴ 12):

ե.- Աւետարանը պիտի քարոզուի ամբողջ տիեզերքում՝ ի վկայութիւն բոլոր հեթանոսների եւ ապա պիտի գայ վախճանը (Մտթ. ԻԴ 14):

Այս բոլորի վրայ Մատթէոս եւ Մարկոս աւետարանիչները աւելացնում են «սուրբ վայրի» աւերածութիւնը.

«Արդ, երբ տեսնէք սասափելի աւերածութիւնը,- որի մասին ասուած է Դանիէլ մարգարէի միջոցով.- որ հաստատուած է սուրբ վայրում (ով ընթերցում է, թող հասկանայ), այն ժամանակ, ովքեր Հրէաստանում կը լինեն, թող փախչեն լեռները...» (Մտթ. ԻԴ 15-16, Մրկս. ԺԳ 14-15):

Ուսումնասիրելով Դանիէլի մարգարէութեան գիրքը, նկատում ենք որ նա «սուրբ վայրի» (յատկապէս Երուսաղէմի տաճարի) երեք տարբեր աւերածութիւնների մասին է խօսում, որոնցից միայն երրորդը ներկայացնում է վախճանաբանական արժէք:

1.- Առաջին աւերածութիւնը կատարուելու էր Անտիոքոս Դ թագաւորի օրօք (Բ Մակ. Ե 15-23, Դան. ԺԱ 31):

2.- Երկրորդը՝ Երուսաղէմի պաշարման ժամանակ (Դան. Թ 27):

3.- Երրորդն ու վերջինը կատարուելու է Հակաքրիստոսի յայտնութեան, աշխարհի վախճանի եւ մեռելների յարութեան ժամանակ (Դան. ԺԲ 11):

Մարգարէի կողմից զուշակուած **առաջին «սարսափելի աւերածութիւնը»** կատարուել է Անտիոքոս Եպիփանի ձեռքով, որին Մակաբայեցւոց Գիրքը կոչում է՝ «չարիքի արմատ» (Ա Մակ. Ա 11): Այդ հեթանոս թագաւորը ոչ միայն նուաճել է հրեա-

ների հողը, այլեւ վերացրել է ճշմարիտ Աստուծոյ պաշտամունքը այդ երկրից: Դրա համար էլ նա նկատի է առնուել իբրեւ Նեռի ներկայացուցիչ կամ նախակարապետ: Իսկ թէ ինչքան ժամանակ պիտի շարունակուէր Երուսաղէմի սարսափելի աւերածութիւնը (այստեղ նկատի են առնուած նաեւ տաճարի զոհասեղանին դրուած կուռքն ու նրա պաշտամունքը), դրա պատասխանն է տալիս Դանիէլ մարգարէն. «Սրբապղծութիւնը պիտի շարունակուի երկու հազար երեք հարիւր օր[3], ապա պիտի սրբանայ սրբարանը» (Դան. Ը 13-14):

Նոյն մարգարէութիւնը աւելի մանրամասն կրկնւում է նաեւ ԺԱ գլխում (30-32), երբ հրեշտակը այլ յայտնութիւնների շարքում Դանիէլի հետ խօսում է նաեւ հալածիչի մասին. «Նա նորից զօրք պիտի գումարի նրանց դէմ, որոնք լքեցին սուրբ ուխտը: Նրա բանակները բռնութեամբ պիտի պղծեն սրբարանը, պիտի վերացնեն ամէնօրեայ զոհաբերութիւնները, պղծութեամբ պիտի ապականեն այն մինչեւ սահմանուած ժամանակը, երբ Իսրայէլը իր պատիժը կրելուց յետոյ նորից հանգիստ ու խաղաղ օրեր պիտի ունենայ»:

Վերոյիշեալից պարզ է դառնում, որ Յիսուսի ակնարկութիւնը Դանիէլ մարգարէի միջոցով գուշակուած «սուրբ վայրի սրբապղծութեան մասին» (Մտթ. ԻԴ 15), չի վերաբերում վերեւում նշուած դէպքերին:

«Սուրբ վայրի» **երկրորդ սարսափելի աւերածութիւնը** տեղի է ունենում առաջինից երկու հարիւր տարի յետոյ (յ. Ք. 70 թ.): Այդ մասին Գաբրիէլ հրեշտակը յայտնել էր Դանիէլին. «Մէկ եւ կէս եօթնեակում պիտի վերանան զոհերն ու ընծաները, աւերածութեան պղծութիւնը պիտի մնայ տաճարի վրայ, ու մինչեւ ժամանակի վախճանը վերջ պիտի տրուի աւերուածին» (Դան. Թ 27): Այսինքն՝ մի անգամ էլ հնարաւոր պիտի չլինի վերականգնելու տաճարը, ինչպէս ժամանակին արել էին:

Հռոմէացիների կողմից հրեաների տաճարի կործանումից քառասուն տարի առաջ, Յիսուս արդէն նոր ուխտ էր կնքել իր ժողովրդի հետ, իր մահուամբ պատռել էր տաճարի սրբարանի վարագոյրը, այսինքն՝ դրա պատռուելով վերացել էր Հին Ուխտը, ինչպէս նաեւ՝ դրա հետ առնչւող տաճարը:

Երրորդ եւ վերջին «սարսափելի աւերածութիւնը» տեղի է ունենալու «ժամանակների վերջում», երբ Միքայէլ հրեշտակն անձամբ պիտի պատերազմի սատանայի եւ նրան ծառայողների դէմ: Այս պարագային ակնարկութիւն չկայ ուղղակի տաճարի մասին, քանզի այն այլեւս գոյութիւն չունի եւ աւերածութիւնն էլ կրում է ընդհանուր բնոյթ: Հրեշտակն յայտնում է Դանիէլին. «Պիտի լինի նեղութեան ժամանակ, նեղութիւն, որպիսին չի եղել այն օրից, երբ ժողովուրդն առաջացաւ երկրի վրայ: Եւ այն ժամանակ պիտի փրկուի քո ժողովուրդը, ինչպէս այս բոլորի մասին գրուած է գրքերում: Երկրում, հողի մէջ ննջածներից շատերը յարութիւն պիտի առնեն, ոմանք յաւիտենական կեանքի համար, եւ ոմանք յաւիտենական նախատինքի ու ամօթի հա-

3 Աստուածաշնչի արեւելահայերէն թարգմանութիւնում գրուած է՝ «հազար երկու հարիւր վաթսունութ օր», մինչդեռ գրաբարում կարդում ենք. «Աւուրս երկուս հազարս եւ երեք հարեւր» կամ՝ «մինչեւ յերեկոյ եւ ի վաղորդայն հազարաց երկուց եւ երեքհարիւրոց»: Ի դէպ, 1260 օրերի յիշատակումին հանդիպում ենք Յովհաննու Յայտնութեան գրքում (Յայտ. ԺԱ 3):

մաբ: Իմաստուն մարդիկ պիտի ճառագեն իբրեւ երկնակամարի լուսատուներ, իսկ արդարներից շատերը առաւել եւս՝ իբրեւ յաւիտենական աստղեր» (Դան. ԺԲ 1-3, 11): Յիսուսի ակնարկութիւնը այս վերջին աւերածութեան մասին է:

Ժողովրդի փրկութեան մասին ակնարկութիւնը նկատի ունի հրեաների դարձն ու փրկութիւնը, մի բան, որ նոյնիսկ Պօղոս առաքեալն է ընդունում (Հռոմ., գլուխ ԺԱ): Արդէն առաջին նորադարձ քրիստոնեաները նրանցից էին:

Ինչպէս նախկին աւերածութիւնների ժամանակ տաճարում վերացուել էր աստուածապաշտութիւնը, այս վերջին պարագայում էլ պիտի տկարանայ եւ շատ վայրերում նոյնիսկ պիտի վերացուի Աստծուն նուիրուած հրապարակային պաշտամունքը, յատկապէս նկատի ունենք Նոր Ուիտի զոհաբերութեան խորհուրդը, այսինքն Ս. Պատարագի լիարժէք մատուցումը՝ հաւատացեալ եւ մաքուր խղճի տէր եկեղեցականների կողմից: Նեռը պիտի մոլորեցնի շատերին եւ մինչեւ իսկ պիտի զայ բազմելու ճշմարիտ Աստծուն նուիրուած տաճարում...

Ո՞Վ Է «ԱՅՍ ՍԵՐՈՒՆԴԸ»

Յիսուս, պատերազմների, սովի, սրածութեան, բնութեան աղէտների, իր աշակերտների դէմ եղած հալածանքների ու Նեռի բռնութիւնների մասին խօսելուց յետոյ,- որոնք տեղի են ունենալու մինչեւ իր վերստին յայտնուելը աշխարհին,- աւելացնում է.

«Թզենուց սովորեցէք առակը. հէնց որ նրա ոստերը կակղեն, եւ նրա վրայ տերեւ դուրս գայ, իմանում էք, որ ամառը մօտ է. նոյնպէս եւ դուք, երբ այս բոլորը կատարուած տեսնէք, իմացէ՛ք, որ նա մօտ է դռների առջեւ»:

«Ճշմարիտ եմ ասում ձեզ, որ չի անցնի այս սերունդը, մինչեւ որ այս բոլորը կատարուեն: Երկինք ու երկիր կ՛անցնեն, բայց իմ խօսքերը չեն անցնի» (Մտթ. ԻԴ 34-35, Մրկս. ԺԳ 28-31, Ղուկս. ԻԱ 29-33):

Ձմեռն անցնելուց յետոյ հէնց որ գարուն է գալիս, տերեւաթափ թզենին, որը մինչ այդ նման էր չորացած մի ծառի, նոր ոստեր է արձակում եւ օժտւում առատ տերեւներով. դա նշան է այն բանի, որ ամառը մօտ է: Իսկ ո՞րն է Տիրոջ գալու նշանը: Դա անշուշտ չի վերաբերում երկնային մարմինների սասանուելուն, որովհետեւ այդ մէկը համարեա զուգընթաց է իր երկրորդ գալու հետ: Այդ նշաններից հիմնականն է այն դաժան հալածանքը, որ Հակաքրիստոսը (Նեռը) շղթայազերծելու է ճշմարիտ Եկեղեցու դէմ:

Այն հաստատումը, թէ **այս սերունդը** չի անցնի, մինչեւ որ այս բոլոր (այսինքն՝ կանխատեսուած աղէտները) կատարուեն, ենթադրել է տուել Յիսուսի ժամանակակիցներից շատերին եւ առաջին դարերի քրիստոնեաներին, թէ իրենք ականատես պիտի լինեն Տիրոջ գալուստին: Դրա համար էլ ակնդէտ սպասել են այդ օրուան: Բայց Յիսուս «այս սերունդը» ասելով՝ նկատի չի ունեցել իր ժամանակակիցների սերունդը, այլապէս նա անպայման կը յարգէր իր խոստումը եւ կը յայտնուէր նրանց:

Լուրջ ուսումնասիրութիւնը ցոյց է տալիս, որ «այս սերունդը» արտայայտութեամբ Յիսուս նկատի է ունեցել հրեաներին, հրեաների սերնդին, ինչպէս, օրինակ, երբ ասում է. «Անհաւատ եւ շնացող սերունդ» (Մտթ. ԺԶ 4), «անհաւատ եւ մոլորուած

սերունդ» (Մտթ. ԺԷ 16), (տե՛ս նաեւ՝ Մրկս. Ը 12, Ղուկս ԺԱ 29, Գործք Բ 40, Փիլիպ. Բ 15): Հետեւաբար, հրեաների սերունդը չի վերանալու նախքան «այդ բոլորի» կատարուելը,- նոյնիսկ եթէ քարուքանդ եղած լինի նրանց տաճարը եւ նրանք՝ տարտղնուած ուրիշ ազգերի մէջ,- մինչեւ որ տեսնեն մարդու Որդու յաղթական գալուստը ամպերի վրայով:

ԻՆՉՈՐ «ՈՉ ԷԼ ՈՐԴԻՆ»

Ինչպէս տեսանք, Յիսուս իր ժամանակակիցներին եւ հետագայ սերունդներին երբեք չյայտնեց իր գալստեան ճշգրիտ թուականը՝ ասելով. «Այդ օրուայ եւ ժամի մասին ոչ ոք չգիտէ, ո՛չ հրեշտակները երկնքում եւ ո՛չ էլ՝ Որդին, այլ միայն Հայրը» (Մրկս. ԺԳ 32, տե՛ս նաեւ՝ Մտթ. ԻԴ 36: Ղուկաս եւ Յովհաննէս աւետարանիչները չունեն Յիսուսի այս խօսքը):

Ոմանք «**ո՛չ էլ Որդին**» արտայայտութիւնը ջնջել են Աւետարանի բնագրից՝ աստուածբանական առումով այն անհամատեղելի համարելով Յիսուսի աստուածային բնութեան հետ, որի համար համապատասխան տեքստը վերաշարադրել են այսպէս. «Այդ օրուայ եւ ժամի մասին ոչ ոք չգիտէ, ոչ իսկ հրեշտակները երկնքի, այլ միայն իմ Հայրը»:

Սխալ է այն կարծիքը, թէ Յիսուս ըստ իր մարդկային բնութեան չգիտէր այդ օրուայ ու ժամի մասին, սա քաղկեդոնական մեկնաբանութիւն է: Նոյնպէս սխալ է կարծել, թէ առաջին քրիստոնեաներից մէկնումէկը աւելացրած լինի «*ոչ էլ Որդին*», այլ, ընդհակառակը, դրա առկայութիւնն ինքնին գալիս է ապացուցելու դրա վաւերականութիւնը՝ իբրեւ Տիրոջ սեփական խօսք:

Իսկ նրանք, ովքեր չեն ընդունում Յիսուսի աստուածութիւնը, դրա իբրեւ ապացոյց բերում են Աւետարանի վերոյիշեալ նախադասութիւնը եւ ասում՝ եթէ Յիսուս իրօք Աստուած է կամ նրա բնութիւնը ունեցող Աստծոյ Որդի, ուրեմն, անպայման պէտք է ամենագէտ լինի, հետեւաբար՝ պիտի իմանար իր գալու օրն ու ժամը եւ երբեք չէր կարող մի այդպիսի արտայայտութիւն ունենալ:

Այդպէս մտածողներին պէտք է ասել, որ Յիսուսի խօսքը սխալ մեկնաբանելով՝ նոր գայթակղութեան են տեղիք տալիս, քանի որ Յիսուս ասում է, թէ միայն Հայրը գիտէ իր գալու օրը, ուրեմն՝ Սուրբ Հոգի՞ն էլ չգիտէ, նա՞ էլ ամենագէտ չէ: Քա՛ւ լիցի, չի կարելի մակերեսային մօտեցում ունենալ նման նուրբ հարցերի նկատմամբ:

Ճշմարտութիւնն այն է, որ Յիսուսի վերոյիշեալ արտայայտութիւնը բնավ կապ չունի իր կամ Ս. Հոգու իմացութեան հետ: Նա պարզապէս կամեցել է ցոյց տալ Հայր Աստծու դերն ու իրաւասութիւնը այդ վերջին օրուայ ու ժամի **յայտնութեան** վերաբերեալ: Այս միեւնոյն տեսակէտը հէնց ինքը՝ Յիսուս մի այլ տեղ պարզաբանում է. «Ձեզ տրուած չէ իմանալ այն ժամերն ու ժամանակները, որ Հայրը հաստատեց միայն իր իշխանութեան մէջ» (Գործք. Ա 7): Նոյն առումով նա ասում է նաեւ, թէ արքայութեան մէջ իր աջ կամ ձախ կողմը կը նստեն միայն նրանք, ում իր Հայրը կը թոյլատրի (Մտթ. Ի 23):

Հայր, Որդի եւ Ս. Հոգի երեք անձեր են, մի բնութիւն ունեն, մի աստուածութիւն են, բայց Փրկագործութեան խորհրդում նրանք հանդէս են գալիս տարբեր դերերով:

Ի դէպ, Սպեփանոս Սիւնեցին Յիսուսի այդ խօսքն ընդունում է այնպէս, իբրեւ թէ նա կամեցել է ինչպէս մարդկանց մեղքերը, նոյնպէս եւ նրանց անգիտութիւնն իր վրայ վերցնել, դրա համար էլ ասել է, թէ «այդ օրուայ ու ժամի մասին Որդին չգիտէ»[4]:

ՀԱԶԱՐԱՄԵԱՅ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ

«Հազարամեակը» կամ յունարէն՝ «քիլիազմ»-ը նրկատի ունի Քրիստոսի հազարամեայ թագաւորութիւնը այս երկրի վրայ, որի համաձայն Քրիստոս երկիր պիտի վերադառնայ՝ նախքան աշխարհի վախճանը եւ այնտեղ պիտի հաստատի մի երկրային մեսիական թագաւորութիւն, որը տեւելու է հազար տարի, որի համար մարմնապէս յարութիւն պիտի առնեն միայն մարտիրոսներն ու արդարները (առաջին յարութիւն) եւ Յիսուսի հետ պիտի թագաւորեն: Այդ ընթացքում սատանան կապուած պիտի մնայ. այնուհետեւ մի փոքր ժամանակով նորից ազատ պիտի արձակուի, մինչեւ որ վերջնականապէս կորստեան դատապարտուի Վերջին Դատաստանի ժամանակ: Դա այն ժամանակն է, երբ մեղաւորներն էլ մարմնապէս յարութիւն պիտի առնեն (երկրորդ յարութիւն) եւ յաւիտենական դատապարտութեան ենթարկուեն, մինչ արդարները վերջնականօրէն պիտի արժանանան Աստծու արքայութեանը:

Այս տեսակէտը հիմնուած է Յովհաննու Յայտնութեան գրքի այն հատուածի վրայ, ուր ասուած է.

«Եւ տեսայ մի ուրիշ հրեշտակ, որ իջնում էր երկնքից եւ իր ձեռքին ունէր դժոխքի փականքներն ու մեծ շղթաներ: Եւ բռնեց վիշապին՝ հին օձին, որ է բանսարկուն եւ սատանան. եւ հազար տարով կապեց նրան: Նրան գցեց դժոխքի անդունդների մէջ եւ փակեց ու կնիք դրեց նրա վրայ, որպէսզի այլեւս երբեք չմոլորեցնի ազգերին, մինչեւ որ լրանայ հազար տարին: Եւ այնուհետեւ պէտք է, որ նա արձակուի մի փոքր ժամանակով:

«Տեսայ նաեւ գահեր, նստեցին դրանց վրայ. եւ նրանց իշխանութիւն տրուեց դատելու եւ ընտրելու այն հոգիներին, որոնք Յիսուսին եւ Աստծու խօսքին իրենց վկայութեան համար չարչարուել էին. նաեւ նրանց հոգիներին, որոնք չերկրպագեցին գազանին եւ չստացան նրա դրոշմը իրենց ճակատների, ոչ էլ իրենց աջ ձեռքի վրայ. եւ նրանք նորից կեանք ստացան եւ թագաւորեցին Քրիստոսի հետ հազար տարի: Եւ սրանից յետոյ մեռելներից ոչ ոք չկենդանացաւ մինչեւ կը լրանար հազար տարին: Այս է առաջին յարութիւնը: Երանի՛ այն սրբերին, որոնք բաժին ունեն առաջին յարութեան մէջ: Սրանց վրայ երկրորդ մահը իշխանութիւն չունի. նրանք պիտի լինեն քահանաներ Աստուծոյ եւ Տէր Յիսուս Քրիստոսի ու նրա հետ պիտի թագաւորեն հազար տարի:

«Եւ հազար տարի յետոյ հրեշտակը պիտի արձակի սատանային ու պիտի հանի բանտից. եւ սա պիտի ելնի ու պիտի մոլորեցնի բոլոր ազգերին երկրի չորս կողմերում» (Յայտ. Ի 1-7):

Քրիստոնէական նախնական համայնքում հաւատքը՝ Յիսուսի երկրաւոր հազարամեայ թագաւորութեան նկատմամբ, մեծ տարածում էր գտել ոչ միայն ժողովր-

4 **Սպեփանոս Սիւնեցի**, Չորս Աւետարանների համառօտ մեկնութիւնը, էջ 108:

դական մակարդակով, այլեւ մի շարք կարեւոր աստուածաբանների մօտ, որոնցից կարելի է յիշել Պապիասը (70 - 130), Յուստինոս Վկան († 165), Իրենէոս Լիոնացին (140 - 200), Տերտուղիանոսը (160 - 230), Հիպպոլիտոս Հռոմէացին (170 - 236), Մեթոդիոս Ողիմպիացին († 311), Լակտանտինոսը (250 - 320), Հերոնիմոսը (347 - 419) եւ Ս. Օգոստինոսը (354 - 430) իր երիտասարդութեան ժամանակ:

Փոքր Ասիայում (Փռիւգիայում) հաստատուած մոնտանականներն էլ (հիմնուած 2-րդ դարում Մոնտանոսի կողմից) Հազարամեայի ուսմունքի կարեւոր ջատագովներն էին, որոնք հետագայում դատապարտուեցին Եկեղեցու կողմից որպէս հերետիկոսներ:

Պաշտօնական Եկեղեցին ջատագով հանդիսացաւ Յայտնութեան Գրքի վերոյիշեալ հատուածի այլաբանական մեկնութեանը: Այդուհանդերձ, այդ հատուածը բառացի իմաստով ընկալողներն ու մեկնաբանողները շարունակեցին պնդել իրենց տեսակէտների վրայ:

Ինքնին, թէ՛ Հազարամեայ թագաւորութեան եւ թէ՛ Յովհաննու Յայտնութեան ընդհանուր գրքի մեկնաբանման հարցը լուրջ դժուարութիւններ է յարուցում: Դրա համար էլ Եկեղեցին երկար ժամանակ վարանել է այդ գիրքը ընդգրկելու Նոր Կտակարանի կազմում, մանաւանդ որ գոյութիւն ունեն յայտնութենական ժանրին պատկանող այլ գրուածքներ եւս, ինչպիսիք են Պետրոս առաքեալի Յայտնութիւնը, Հերմասի Հովիւը, որոնք դուրս են մնացել Ս. Գրքի կանոնից, իսկ Յովհաննէսինը ընդունուել է պարզապէս նրա համար, որ վաւերական է համարուել հեղինակի՝ Յովհաննէս առաքեալը լինելու հանգամանքը, ելնելով նրա գրած Աւետարանի եւ Յայտնութեան գրքի միջեւ առկայ լեզուական ու ոճային նմանութիւններից:

Հազարամեան իր այլաբանական իմաստով ընկալողներից Ս. Օգոստինոսը գրում է այսպէս. «Իմ կարծիքով հազար տարին կարելի է հասկանալ երկու իմաստով.- առաջինը այն է, որ այս վերջին հազար տարում է կատարւում այս բանը (այսինքն՝ սատանայի շղթայակապուելը), որն համապատասխանում է վեցերորդ հազարամեակին եւ ինչպէս վեցերորդ օրը՝ այժմ այն իր ընթացքի մէջ է, որին պիտի յաջորդի գիշեր չունեցող մի շաբաթ օր, եւ դա սրբերի հանգիստն է: Տեսանողը (Յովհաննէսը) հաւանաբար ընթացքի մէջ եղող այդ վեցերորդ օրուայ վերջին մասը, այսինքն՝ այն մասը, որ դեռ մնում է (սկսած Յովհաննէսի տեսիլքից) մինչեւ աշխարհի վախճանը, կոչում է հազար տարի՝ համաձայն հռետորական այն ոճի, որ ընդհանրացում անելով՝ նկատի ունի միայն որոշակի մի հատուած: Երկրորդ իմաստը գուցէ այն է, որ Տեսանողը նկատի ունի մեր դարաշրջանի բոլոր տարիները (սկսած Քրիստոսի աշխարհ գալուց), այնպէս որ մի կլոր թով կամեցել է ներկայացնել ժամանակի ամբողջութիւնը: Հազարի խորանարդ արմատն է 10: 10 բազմապատկած 10-ով հաւասար է հարիւրի, որը քառակուսիի միայն մակերեւոյթն է: Որպէսզի դրան տրուի խորութիւն ու ծաւալ եւ վերածուի խորանարդի՝ բազմապատկւում է մի անգամ եւս 10-ով եւ արդիւնքը լինում է 1000 (100 x10 =1000):

«Սովորաբար 100 թիւը կիրառւում է նշելու համար մի ամբողջութիւն, հետեւաբար հազար թիւն էլ, որի խորանարդ արմատն է 10-ը, նոյնպէս ներկայացնում է մի ամբողջութիւն: Այս կերպ պէտք է հասկանալ նաեւ Սաղմոսի (ՃԳ) հետեւեալ խօսքե-

բը. «Նա իր ուխտը յաւիտեան յիշեց եւ իր խոստումը՝ մինչեւ հազար սերունդ»: «Հազար սերունդ» ասելով՝ նկատի են առնում բոլոր սերունդները» [5]:

Ուրեմն, այլաբանական իմաստով հազար տարին մի անորոշ կամ չսահմանափակուած ժամանակաշրջան է Տիրոջ առաջին եւ երկրորդ գալուստների միջեւ ընկած: Ըստ Ս. Օգոստինոսի՝ սատանան թէեւ շղթայուած է, բայց ոչ ամբողջական կերպով: Դրա համար էլ ներկայ ժամանակաշրջանը պայքարի մի ժամանակաշրջան է քրիստոնէական համայնքի եւ աշխարհի, Քրիստոսի իշխանութեան եւ սատանայի իշխանութեան միջեւ[6]:

Թէ ինչպէս է կարողանում շղթայուած սատանան այդուհանդերձ մոլորութեան մէջ գցել ու խորտակել շատերին, Ս. Օգոստինոսը բացատրում է բաւական յաջող կերպով՝ ասելով, թէ նա յաղթում է միայն թոյլերին եւ անփոյթներին: Նա շղթայուած է ինչպէս մի շուն, ոչ ոքի չի կարող կծել, բացի նրանից, ով անմտութեամբ կը մօտենայ իրեն, քանզի իսկապէս բաւական անմիտ է նա, ով թոյլ կը տայ, որ մի կապուած շուն կծի իրեն: Եթէ աշխարհիկ ցանկութիւններով ու կրքերով համակուած չես՝ դու չես մօտենայ նրան՝ եւ նա էլ քեզ չի մօտենայ, կարող է կատաղել, հաչել, սպառնալ, բայց ոչ ոքի չի կարող վնաս հասցնել, մեզ չի կարող իր կամքը պարտադրել առանց մեր համաձայնութեան[7]: Այս իմաստով է, որ Յիսուս ասել է. «Այս աշխարհի իշխանը դատապարտուած է» (Յովհ. ԺԶ 11):

Իսկ ինչ վերաբերում է հազարամեայ թագաւորութեան համար յարութիւն առած մեռելներին, որ նկատի է առնում իբրեւ առաջին յարութիւն՝ ի տարբերութիւն երկրորդ եւ վերջնական յարութեան (Յայտ. Ի 4-6), Ս. Օգոստինոսը այդ առաջին յարութեամբ նկատի ունի մկրտութեան խորհուրդը, որով մկրտուողը աւազանից վերակենդանանում է իբրեւ մասնակից Քրիստոսի յարութեան ու փառքի:

Հազարամեայի մասին Մաղաքիա Օրմանեան պատրիարքը գրում է.

«Հազարամեայց կամ քիլիաստայց կարծիքը երեւեցաւ Եկեղեցւոյ առաջին դարերուն՝ իբրեւ վերջին նշխար ակնկալութեան Քրիստոսի մօտալուտ գալստեան եւ իբր բառական մեկնութիւն Յայտնութեան խօսքերուն, ուր կը տեսնուին, որ արդարները հազար ամ կը թագաւորեն Քրիստոսի հետ (Յայտ. Ի 4): Այդ թագաւորութիւնը պիտի տեղի ունենար երկրի վրայ, ուր Քրիստոս վերստին պիտի երեւէր իբրեւ Թագաւոր: Իր ընտրեալները, որոնք իր հաւատքին համար նահատակուեցան կամ որոնք չուրացան անոր հաւատքը, պիտի միասին թագաւորէին առաջին Յարութեամբ մինչեւ երկրորդ Յարութեան ժամանակը, որմէ վերջ երկնից արքայութիւնը պիտի մտնէին: Նախնի հայրերէն ոմանք եւս, ինչպէս՝ Պապիաս, Յուստինոս, Երանոս (Իրենէոս) եւ Լակտանտինոս հազարամեաններէն կը համարուին, սակայն անոնց կարծիքը տարբեր էր քիլիաստեայց կարծիքէն, որոնք հազարամեայ թագաւորութիւնը երկրաւոր հեշտութեանց մէջ կը հաստատէին, մինչ առաջինները սուրբ եւ հոգեւոր վայելքներու մէջ կը դնէին զայն: Հազարամեայց կարծիքը նորոգուեցաւ Արեւմուտքի մէջ ԺԲ

5 **Augustinus**, De civitate Dei, XX 7:
6 Անդ, XX 11:
7 Տե՛ս Sermo 37, PL 39, 1820:

դարուն, կալաբրացի Յովակիմ աբբայի ձեռքով, որ առաջնորդ եղաւ յովակիմեանց աղանդին, ու բողոքականաց ծագումէն ետքը անոնցմէ ոչ սակաւք ընդգրկեցին հազարամեայ վարդապետութիւնը՝ պատշաճեցնելով զայն Նեռին եւ Բաբելոնի անկման (Յայտ. ԺԸ 2), որուն մէջ ուզեցին տեսնել Հռոմի Եկեղեցիին պատկերը: Սակայն հիմակ այլեւս չեն երեւիր հազարամեաններ, եւ անոնց կարծիքը պէտք է դասել ի կարգ վաղնջական երեւոյթներու, որոնք արժանի իսկ չեն յիշատակութեան՝ իբրեւ վարդապետական դրութիւն»[8]:

«ՄԱՐԱՆ ԱԹԱ»

Քրիստոսի աշխարհ վերադարձը կամ աւելի ճիշտը՝ աշխարհին վերայայտնուելը այն ապտիճան յուսադրիչ եւ մխիթարական ազդեցութիւն է թողել նախնական Եկեղեցում, որ նրա անդամները անձկանօք տենչացել են այդ վերջնական յայտնութեանը՝ հանապազ աղօթելով. «Եկ, Տէր Յիսուս Քրիստոս»: Այս սրտառուչ թախանձանքով է փակում Յովհաննէս առաքեալը իր Յայտնութեան գիրքը (Յայտ. ԻԲ 20)՝ «Եկ, Տէր Յիսուս Քրիստոս», որը Պօղոս առաքեալն էլ է մէջբերում ուղղակի արամերէն լեզուով (Ա Կորնթ. ԺՁ 22). «**Մարանա թա**», այսինքն՝ «Եկ, Տէր մեր» կամ տարբեր ընթերցմամբ՝ «**Մարան աթա**», այսինքն՝ «Տէրն է գալիս»: Այս վերջին թարգմանութիւնը աւելի հարազատ է թւում բնագրի ոգուն, որովհետեւ դրուած է իբրեւ եզրակացութիւն «Տէր Յիսուսին ատողներին կամ արհամարհողներին»՝ հասկացնելով, թէ ուշադրութիւն թող անեն բոլոր նրանք, ովքեր հալածում են Քրիստոսին կամ նրա հաւատացեալներին, քանզի «Տէրն է գալիս», «Տէրը մօտ է» (Փիլիպ. Դ 5). «Տիրոջ գալուստը մօտեցել է» (Յակ. Ե 8), «Ահա՛ւասիկ, Դատաւորը դռանն է» (Յակ. Ե 10):

Հաւատացեալին կը մնայ ջինջ հաւատի անմար լապտերով միշտ պատրաստ լինել դիմաւորելու Տիրոջ ժամանումը եւ Յովհաննէս առաքեալի նման ասելու. «Ամէն: Եկ, Տէր Յիսուս Քրիստոս»: Այդ ցանկալի, կենարար ու երջանկաբեր հանդիպումը մեր Տիրոջ հետ գուցէ պատահի մեր մարմնական մահուան պահին կամ այս աշխարհի վախճանին: Յամենայն դէպս, յանուն այդ երանական տեսութեան, յանուն մեր հոգու խաղաղութեան՝ «Եկ, Տէր Յիսուս Քրիստոս: Ամէն»[9]:

---

8 **Մ. Օրմանեան**, Տեղիք Աստուածաբանութեան, Երուսաղէմ, 1981, տե՛ս «Գանձասար», Դ, 1993, էջ 31:

9 Մեր այս յօդուածի համար օգտակար եղան նաեւ հետեւեալ աշխատութիւնները. **F. Alañiz, L. Castellani,** La Iglesia patristica y la parusía, Bs. As. 1962. **H. Kraft,** Chiliasmus (Die Religion in Geschichte und Gegenwart), I, Tübingen 1957. **A. Eisen,** Die Lehre von der Wiederkunft Christi (Lutherische Beiträge 9), 2004. **J. Moltmann,** Das Kommen Gottes. Christliche Eschatologie, Gütersloh 1995. **F-J. Nocke**, Handbuch der Dogmatik, Düsseldorf 1992. **F. Mussner,** Christus vor uns, Frankfurt/M 1966. **O. Betz,** Die Eschatologie in der Glaubensunterweisung, Würzburg 1966. H. Vorgrimler, Hoffnung auf Vollendung. Aufriß der Eschatologie, Freiburg 1980.